Жидкий шлак выливался из шахтной печи и затвердевал. Твердый шлак, будучи хрупким, разбивался ударами молота, а пластичное железо только несколько деформировалось, но не разрушалось и легко отделялось от шлака, фактически путем битья. Полученное путем битья шлака железо получило название крица. Этот термин происходит из индоевропейско-армянского слова кур [20] (KUR, арм. Կըր), в исходно-отложительном падеже отвечающем на вопросы *umiz* ?, *inchiz* ? (арм. ումիզ, ինչի՞նչ), в значении от кого?, из чего?, с двойным суффиксом –“иц”», и –“ай” (*iz* и *ay*), причем конечный -й краткий звук не произносится и читается *крица* (*kriza*) [21] и имеет значение “избитый”, “выбитый”. Термины в армянском языке технологичны и указывают либо признак (свойство), либо место, либо необходимое действие. В данном случае применяется необходимое действие – избитие, выбивка. Из всех технологий, примененных впоследствии в Европе, ближе всего к древнейшей технологии является технология, примененная фирмой Круппа – Крупп-Реннферфарен в

середине XX века (нем. Krupp-Rennverfahren) [22]. По этой технологии восстановленное твердое железо выбивается из железистого твердого шлака. Разница только в том, что вместо шахтной печи применяется горизонтальная трубчатая печь большой длины (до 72 м), размельчение шлака производится в шаровых мельницах, а для отделения железных комков размерами 1...50 мм применяется магнитная сепарация. Этот способ получения железа в СССР получил название “крично-рудовой процесс”.

Во всех остальных случаях (технологиях) железо получают либо из тестообразного шлака (сыродутный процесс), либо из чугуна - кричный горн или пудлинговый способ (англ. Pudling).

Пудлинговая сталь применялась до конца XIX века и в России, которая была заменена “литейной сталью”.

Таким образом, первоначально железо получалось при шахтной плавке смешанных медных руд из твердого отвального шлака путем избивания последнего. При этом хрупкий шлак легко размельчался, а куски железа оставались целыми и отбирались, отделяясь из общей смеси. Именно полученное по такой технологии железо получило армянское название *крица(й)*, “избитый”, “выбитый”.

Заключение. Впервые определено, что металлургическое железо было получено в шлаках медеплавильного производства при переходе от использования руд зоны окисления к рудам сульфидной зоны, т.е. смешанных руд. Показано, что именно флюорит (CaF_2), входящий в состав костной смеси, используемой в древности армянскими металлургами, является причиной снижения температуры плавления шлаков, а вовсе не CaO и P_2O_5 , указываемых другими авторами. Именно это обстоятельство позволило индоевропейским металлургам получать крицай железо.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ

1. Большая советская энциклопедия.- 2-е издание.- Том 42.- М., 1956.- 607с.
2. Цимерман Р., Гюнтер С. Металлургия и материаловедение: Справочник.- М.: Металлургия, 1982.- 344с.
3. Белых О.А., Дринца М.Е. Диаграммы состояния двойных и многокомпонентных систем на основе железа: Справочник.- М.: Металлургия, 1986.- 319с.
4. Колчин Б.А. Черная металлургия и металлообработка в Древней Руси.- М.: Изд-во АН СССР, 1953.- 159с.
5. Eaton E.R., Me. Kerrel H. Near Eastern Alloying and some Textual Evidence for the early use of Arsenical copper // World Archaeology.- 1976.-V. 8, №. 2.- P. 169-174.

6. **Иванов В.В.** Возникновение и развитие химии с древних времен до XVII века: Сборник.-М.: Наука, 1980.- С. 57-72.
7. **Мартirosян А.А.** Аргиштихинили // Археологические памятники Армении. "Урартские памятники".- Ереван, 1974.- Вып. 1.- С. 152-159.
8. **Maddin R.** Early iron metallurgi in the Near East // Traansaktions of the iron and Steel Institute of Japan.- Nippon Tekko kyokai, 1975.- Vol. 15.- P. 59.
9. **Иванов В.В.** Проблемы истории металлов на Древнем Востоке в свете данных лингвистических // Историко-филологический журнал (ИФЖ).- Ереван: Изд. АН АрмССР, 1976.- С. 59-70.
10. Большая советская энциклопедия.- 2-е издание.- Том 23.-М., 1953.- С. 140.
11. Большая советская энциклопедия.- 2-е издание.- Том 47.- М., 1957.- С. 664-665.
12. **Геворкян А.Ц.** Из истории древнейшей металлургии Армянского Нагорья.- Ереван: Изд-во АН АрмССР, 1980.- С. 39.
13. **Куфтин Б.А.** Урартский "Колумбарий" у подножия Арарата и куроаркский энеолит // ВМГ.- Тбилиси.-1943.- Т. XIII.- С. 38.
14. **Кушнарев К.Х., Чубинишвили Т.Н.** Древние культуры Южного Кавказа (V-III тыс. до н.э.).- Л.: Наука, 1970.- С. 132.
15. **Mellink M.J.** Archaeology in Asia Minor // Amer. J. Archaeol.- 1974.- Vol. 72, N2.- P. 22.
16. **Wertime T.A.** Pyrotechnology. Man s First Industral Uses of Fire // Amer. Sei.- 1973.- Vol. 61, N6.- P. 670-682.
17. **Marschall V.** Transpazifische Kulturbeziehungen zu ihren Geschichte.- Munchen, 1972.- 35p.
18. **Neu E. Der Anitta-Text** (S tudien zu den Bogazkoy-Texten18).- Wisbaden, 1974.- 44p.
19. Справочник металлурга по цветным металлам.- Т. 2.- М.: Гос. науч. тех. издат., 1947.- 198с.
20. **Ачарян Гр.** ЭКСАЯ.- Т.2.- 1935.- 662с.
21. **Алаян А.А.** Происхождение и этимология собственно армянских металлургических терминов // ИФЖ.- 2002.- N1.- С. 210-216 (на арм. яз.).
22. **Алаян А.А., Айвазян В.В.** Технологияковки, индоевропейский армянский терминковки // Вестник Инженерной академии Армении.- 2010.- Т. 7, N3.- С. 521-523.

Национальный политехнический университет Армении. Материал поступил в редакцию 21.12.2020.

Ա.Ա. ԱԼԱՅԱՆ, Տ.Ա. ԴԵՄԻՐՉՅԱՆ

ԻՆՉՊԵՍ Է ԾԱԳԵԼ ԵՐԿԱԹԻ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱՆ

Առաջին անգամ ցույց է տրվում, որ երկաթի մետալուրգիան իր արմատներով սերտորեն կապված է պղնձի մետալուրգիայի հետ, մասնավորապես՝ հենց այն ժամանակաշրջանի հետ, երբ տեղի էր ունենում օգտագործվող պղնձահանքերում անցումը օքսիդացած զոնաներից սուլֆիդային հանքաքարին՝ դրանց հետագա վերամշակմամբ պղնձի և հետագայում երկաթի ստացմամբ: Երկաթը ստացվել է պղնձաձուլական խարամի մեջ վյուստիտի վերականգնմամբ, որը օրինաչափ քիմիական ռեակցիաների արդյունք է: Վերականգնված երկաթի կտորները փխրուն խարամից առանձնացվել են ձեռման, այն է՝ կռման միջոցով:

Առանցքային բառեր. երկաթ, պղնձ, մետալուրգիա, խալկոպիրիտ, վյուսթիթ, վերականգնում, խարամ:

A.A. ALAYAN, T.A. DEMIRCHYAN

HOW DID THE METALLURGY OF IRON ARISE

The scientific substantiation of the reasons for the priority of obtaining copper from iron-containing copper-sulphide ores is given. The role and place of the Armenian metallurgy in the world culture age shown.

It is shown that iron metallurgy has its roots in copper metallurgy, in particular, in the period of transition from the use of copper ores in the oxidation zone to sulphide ores and further processing of the latter. Iron was obtained by reducing wustite trapped in the slag, as a result of regular chemical reactions. The restored lumps of iron were separated from the brittle copper-smelting slag by beating, which is where the Armenian name for this iron came from: Kritsa(y) - beaten, from the Armenian root "Kur".

Keywords: iron, copper, metallurgy, chalcopyrite, vustite, recovery, slag.

Ա.Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Գ.Ռ. ԿԱՆԵՑՅԱՆ, Ա.Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱԷԿ-ՈՒՄ ՌԻՍԿ-ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Միջուկային բնագավառը Կարգավորող մարմինը ստուգումների իրականացման միջոցով հավաստիանում է, որ միջուկային տեղակայանքների շահագործումն անվտանգ է: ՀՀ-ում ստուգումների իրականացման ռեսուրսների արդյունավետ օգտագործման և դրանով անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով մշակվել է ռիսկ տեղեկացված ստուգումների իրականացման գործընթաց: Այն կազմվել է առկա գործընթացի տարբեր փուլերում ռիսկ - տեղեկացված մոտեցումների ներառման միջոցով: Ստուգումների ճիշտ թիրախավորման և խախտումներն ըստ կարևորության դասակարգելու շնորհիվ՝ արդյունավետ կդառնա ստուգումների գործընթացում Կարգավորող մարմնի ռեսուրսների օգտագործումը:

Առանցքային բառեր. ռիսկ-տեղեկացված ստուգումներ, անվտանգության հավանականային վերլուծություն (ԱՀՎ), ատոմային էլեկտրական կայան (ԱԷԿ), Հայկական ատոմային էլեկտրակայան (ՀԱԷԿ):

Ներածություն: Միջուկային տեղակայանքներում անվտանգ շահագործման պահանջների կատարումը վերահսկվում է որոտը Կարգավորող մարմնի կողմից: Կարգավորող մարմնի առաքելությունն է հավաստիանալ, որ միջուկային տեղակայանքի անձնակազմը, բնակչությունը և շրջակա միջավայրը պատշաճ մակարդակով պաշտպանված են տեղակայանքին բնորոշ ռիսկերից [1]: Անվտանգ շահագործման հավաստիացման վերահսկողական կարևոր մեխանիզմ է միջուկային տեղակայանքում ստուգումների իրականացումը, որը Կարգավորող մարմնի հիմնական գործառնություններից է: Կարգավորող մարմնի ստուգումների գործընթացներ կիրառվում են ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների և օբյեկտներում իրականացվող գործողությունների նկատմամբ [2, 3]: Արտաքին ստուգումներից բացի, տեղակայանքներում իրականացվում են նաև ներքին ստուգումներ:

Կարգավորող մարմնի կողմից իրականացվող ստուգումների ծրագրման փուլում ռիսկ-տեղեկացված մոտեցումների կիրառումը կարող է նպաստել ստուգումների ծավալի և ռեսուրսատարության կրճատմանը [2, 3]: Ռիսկ-տեղեկացված մոտեցումներ են կոչվում դետերմինիստական և հավանականային ինֆորմացիան համադրող մոտեցումները: Այսինքն՝ մոտեցումներ, որոնք համատեղ կիրառում են կուտակված շահագործման փորձից հայտնի դարձած ինֆորմացիան և ԱՀՎ արդյունքները:

Ռիսկ-տեղեկացված մոտեցումներն ունեն տարբեր կիրառություններ: Ռիսկ-տեղեկացված մոտեցումների կիրառության ոլորտներն են՝ ռիսկ-տեղեկացված ստուգումները, ինչպես նաև կարգավորող մարմնի որոշումների կայացման գործընթացը, որը կիրառություն է գտել մի շարք երկրների կարգավորող մարմինների կողմից: Վերջինիս նպատակը վտանգների և ռիսկերի դերի առավել հանգամանալից ներկայացումը և որոշումների կայացման գործընթացի հետ դրանց կապերի հաստատումն է [4]:

Աշխարհի տարբեր երկրներում (այդ թվում՝ նաև ՋՋԷՌ շահագործող երկրներից Ֆինլանդիայում) իրականացվել են ռիսկ-տեղեկացված ստուգումների փորձնական ծրագրեր, որոնց նպատակն էր պարզել տվյալ միջուկային էներգաբլոկի ԱՀՎ արդյունքների հնարավոր կիրառելիությունը՝ ստուգման ենթակա տարրերի թիրախավորման նպատակով: Ուսումնասիրությունների նպատակներից էր նաև տեղակայանքների ուղղորդումը ռիսկ-տեղեկացված ստուգումների և մոտեցումների մեթոդի ընտրության հարցում [5]:


Ստուգումների ընթացքում բացահայտված խախտումների կարևորության գնահատման դեպքում, փորձագիտական գնահատման հետ մեկտեղ, երբեմն կիրառվում են նաև ռիսկ-տեղեկացված մոտեցումներ: Ռիսկ-տեղեկացված մոտեցումները քանակական գնահատման հնարավորություն են ընձեռում: Փոքրաթիվ միջուկային էներգաբլոկներ շահագործող երկրներում, որպես կանոն, առկա են ստուգումների իրականացման սահմանափակ ռեսուրսներ (անձնակազմ, ֆինանսական միջոցներ և այլն), ուստի և արդիական է իրականացվող ստուգումների ռեսուրսատարության կրճատման խնդիրը: Այդ նպատակով մշակվում է ռիսկ-տեղեկացված ստուգումների իրականացման գործընթաց: Վերջինս մշակվում է այնպես, որ բարելավվի ԱԷԿ-ի ստուգումների արդյունավետությունը և հետևաբար՝ որոշակիորեն նաև ԱԷԿ-ի անվտանգության մակարդակը:

Ռիսկ-տեղեկացված ստուգումների կարևոր առանձնահատկություններից է նաև այն, որ դրանք բացահայտում են անվտանգության վրա մեծ դերակատարում ունեցող տարրերը՝ անգամ անվտանգության երրորդ և չորրորդ դասերի դեպքում: Մա իր հերթին կարող է նպաստել ստուգումների ապակենտրոնացմանը առաջին և երկրորդ անվտանգության դասերի համակարգերի տարրերից՝ նպաստելով ստուգումներն իրականացնող անձնակազմի ճառագայթային բեռնվածքի նվազեցմանը [5]:

Աշխատանքի նպատակն է մշակել ռիսկ-տեղեկացված ստուգումների իրականացման գործընթաց, որը կբարելավի ստուգումների իրականացումը, ինչպես նաև մեծածավալ ԱՀՎ և այլ ինֆորմացիայի ամբողջացման և ամփոփման միջոցով կստեղծի տեսուչների կիրառման համար ստուգումների արդյունավետ թիրախավորմանն օժանդակող հարմար գործիք:

Ռիսկ-տեղեկացված ստուգումների իրականացման գործընթացի մշակումը: Միջազգային փորձի, խորհրդատվությունների, պահանջների ուսումնասիրության և վերլուծության հիման վրա, տեղական փորձի վերլուծության արդյունքում կիրառվող գործընթացի բարելավման նպատակով, մշակվել է ռիսկ-տեղեկացված ստուգումների իրականացման գործընթաց:

Ռիսկ-տեղեկացված մոտեցումների ինտեգրումը ՀՀ ՄԱԿԿ-ի (Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի) ստուգումների իրականացման գործընթացում սխեմայի տեսքով ներկայացված է նկ.1-ում:



Նկ.1. Ռիսկ-տեղեկացված ստուգումների իրականացման առաջարկվող գործընթացը

Կիրառվող գործընթացի հիմքում ՀՀ օրենսդրությունը և Կոմիտեի մշակված ներքին փաստաթղթերն են: Դրանց հիման վրա կատարվում են տարբեր տիպի ստուգայցեր: Ստուգայցերի արդյունքում արձանագրվում են խախտումները, կազմվում դրանց վերացումը պահանջող կարգադրագրեր:

Ռիսկ-տեղեկացված ստուգումների իրականացումը ենթադրում է ստուգումների ծրագրման ժամանակ դետերմինիստական ինֆորմացիայի հետ մեկտեղ ԱՀՎ արդյունքների կիրառում՝ թիրախավորելով ռիսկ-նշանակալի տարրերը: Ստուգումները ծրագրելիս ԱՀՎ արդյունքների կիրառմամբ բացահայտվում են ստուգման ենթակա կարևոր տարրերը: Վերջիններս ներառվում են ստուգման ծրագրում:

Կարգադրագրերում խախտումների վերացման ժամկետների սահմանման համար մշակվել է ռիսկ-տեղեկացված մոտեցում: Ստուգումների կազմակերպման և անցկացման գործընթացում ԱՀՎ արդյունքների կիրառումն ունի մի շարք դրական կողմեր, որոնցից են անվտանգության մակարդակի առավել արդյունավետ բարձրացումը, մարդկային ռեսուրսի արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև իրականացվող ստուգումների ծավալի հնարավոր կրճատումը:

ԱԷԿ-ներում ստուգումների իրականացման արդյունքում արձանագրված խախտումների կարևորության գնահատման միջազգային փորձի վերլուծություն:

Դիտարկվել է քսանից ավելի երկրների փորձը, և առանձնացվել են լավագույն մոտեցումները: Յուրաքանչյուր երկիր ունի արձանագրված խախտումների գնահատման իր ուրույն մոտեցումը: Որոշ երկրներ կիրառում են դետերմինիստական ինֆորմացիան կամ իրականացնում հավանականային վերահաշվարկներ, մինչդեռ այլ երկրներ համադրում են այդ երկու մոտեցումները: Մոտեցումները համադրող երկրների շարքում են ԱՄՆ-ը, Իսպանիան, Հարավաֆրիկյան Հանրապետությունը, Մեքսիկան, Շվեյցարիան, Ուկրաինան, Ֆինլանդիան, Ֆրանսիան [6-8]:

Մլովակիայում խախտումների կարևորության գնահատումը վիճակագրական է: Վիճակագրական գնահատման նպատակն է ստանալ խախտումների բաշխումը և հաճախականությունը [6]: Ֆրանսիայում խախտումների կրկնելիությունը կարող է օգտագործվել որպես կարևորության որոշման ցուցանիշներից մեկը [6]:

Այլ երկրներ ծրագրում են խախտումների կարևորության գնահատման գործընթացում ներառել ռիսկ-նշանակալիության գնահատումներ: Չեխիայում աշխատանքներ են կատարվում խախտումների գնահատման հավանականային մոտեցումը դետերմինիստական մոտեցման կիրառման մակարդակին հասցնելու ուղղությամբ [6]: Ճապոնիայում կան մտադրություններ՝ ուսումնասիրելու ռիսկ-նշանակալիության գնահատման կոնկրետ մոտեցումները և պարզելու պահանջվող հավաքագրվելիք ինֆորմացիայի շրջանակը, որպեսզի կազմվի յուրաքանչյուր ռեակտորային տեղակայանքի համար հուսալի ինֆորմացիայի հավաքագրման համակարգ, որը կկիրառվի խախտումների ռիսկ-նշանակալիության գնահատման նպատակով [6]:


Դիտարկված բոլոր երկրների փորձը հաշվի առնելով՝ մշակվել է մեր երկրում կիրառելիության տեսանկյունից հարմար գործընթաց, որը հստակ սահմանում է, թե որ դեպքերում ինչ գնահատման տարբերակից է պետք օգտվել, ինչպես նաև տալիս է խախտումների քանակական գնահատման հստակ մեխանիզմ: Ի տարբերություն այլ երկրների, արդեն իսկ առկա էր նմանատիպ գործընթացների կիրառման միջազգային փորձ: Վերջինիս վերլուծությունն օգտակար է եղել այլ երկրներում համանման գործընթացների ներդրման ընթացքում արդեն իսկ բացահայտված թերությունները հաշվի առնելով՝ բացառել դրանց կրկնությունը: Մշակված գործընթացում ներդրված են նոր մոտեցումներ:

ԱԷԳ-ի փաստաթղթերում ներկայացված խորհրդատվությունների և պահանջների վերլուծություն: ԱԷԳ-ի պահանջների համաձայն՝ պետք է կազմվի խախտումների վերլուծության և դրանց վերացման հետ կապված հետագա գործողությունների համակարգված ծրագիր: Ծրագիրը պետք է ընդգրկի արձանագրված խախտման վերացման հետ կապված գործողությունների պարբերական վերա-

նայում և հսկում՝ համոզվելու համար, որ լիցենզակիրը կատարում է խախտման վերացման պահանջները: Գործողությունների ավարտից հետո խախտումների վերացման արդյունքները պետք է փաստաթղթավորվեն [9]:

ԱԷԿ-ներում իրականացվող ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կարևորության գնահատման մշակված գործընթացը: Կիրառվող գործընթացի բարելավման նպատակով մշակված է նոր մոտեցում: Մոտեցումը մշակվել է՝ հաշվի առնելով միջազգային փորձը, միջազգային կարգավորող փաստաթղթերի պահանջները և խորհրդատվությունները:

Առաջարկվող գործընթացը սկսվում է ստուգումների իրականացմամբ: Ստուգումների վերջնարդյունք են արձանագրված դիտարկումները և խախտումները: Խախտումները պետք է տարբերակվեն նվազ կարևոր և գնահատում չպահանջող դիտարկումներից: Դիտարկումը համարվում է խախտում, եթե անվտանգության առումով ունի զգալի ազդեցություն: Եթե դիտարկման ազդեցությունը անվտանգության առումով նվազ կարևորություն ունի, ապա այն ենթակա չէ գնահատման, սակայն ենթակա է շտկման: Տեսուչը պետք է կատարի յուրաքանչյուր արձանագրված խախտման կարևորության գնահատում կամ դիմի գնահատումների իրականացման համար պատասխանատու փորձագետների օգնությանը: Գնահատումներից հետո կազմվում են կարգադրագրեր, որոնցում նշվում են խախտումների վերացման ժամկետները: Լիցենզակիրը կարող է բողոքարկել կարգադրագրերը՝ ներկայացնելով հիմնավորումներ: Բողոքարկման դեպքում գնահատումը վերանայվում է, և կազմվում են նոր կարգադրագրեր, որոնք արդեն ենթակա չեն բողոքարկման: Գործընթացն ավարտվում է կարգավորող մարմնի կողմից կարգադրագրերի պահանջների կատարման ստուգմամբ և արդյունքների փաստաթղթավորմամբ: Գործընթացը սխեմայի տեսքով պատկերված է նկ.2-ում:



Նկ.2. Ստուգումների իրականացման արդյունքում արձանագրված խախտումների կարևորության գնահատման մշակված գործընթացը

Գործընթացի փուլերի մանրամասն մեկնությունը բերված է ստորև.

Փուլ 1՝ ստուգումների իրականացում. Կարգավորող մարմնի գլխավոր պարտականություններից է ԱԷԿ-ում ստուգումների իրականացումը: Ստուգումների վերջնարդյունք են արձանագրված դիտարկումները և/կամ խախտումները:

Փուլ 2՝ խախտումների հայտնաբերում. Տեսուչների կողմից դիտարկումների՝ խախտումներից տարբերակմանն օժանդակելու համար պետք է կազմվեն հարցաշարեր, որոնք հաշվի կառնեն ազգային կարգավորող փաստաթղթերի պահանջները, ԱԷՄԳ-ի IAEA-TECDOC-1867-ում [10] առաջարկվող, ինչպես նաև ԱՄՆ-ի Միջուկային ոլորտը կարգավորող մարմնի «Կարևորության որոշման» գործընթացում ներկայացված հարցաշարերը [11]:

Փուլ 3՝ խախտումների կարևորության գնահատում. Խախտման կարևորության գնահատման փուլն ընդգրկում է երեք տարբեր ուղիներ՝ ԱՀՎ մոդելում արտացոլված եզակի կամ բազմակի անկախ խախտումների կարևորության գնահատում (փուլ 3ա), ԱՀՎ մոդելում արտացոլված բազմակի փոխկապակցված խախտումների կարևորության գնահատում (փուլ 3բ), ԱՀՎ մոդելում չարտացոլված խախտումների կարևորության գնահատում (փուլ 3գ):

Փուլ 3ա՝ տեսուչի գնահատական. Եզակի խախտման կամ բազմակի, միմյանցից անկախ խախտումների կարևորությունը որոշվում է համակարգերի տարրերի ռիսկ-նշանակալիության ցանկերի կիրառմամբ:

ԱՀՎ ոլորտում կան տարատեսակ կարևորության ցուցիչներ, որոնք ԱՀՎ մոդելը կիրառելի են դարձնում ցանկացած տիպի վերլուծության շրջանակներում՝ կարևոր տարրերի ընտրության գործընթացում:

Համակարգերի, տարրերի, անձնակազմի սխալներն ըստ ռիսկ-նշանակալիության դասակարգելու համար կօգտագործվեն RAW (Risk achievement worth) և FC (Fractional contribution) ցուցանիշները հետևյալ կերպ [12]՝

- Բարձր ռիսկ-նշանակալիություն՝

$$RAW(E) > 2 \text{ և } FC(E) > 0.005 \text{ կամ } RAW(E) > 100 \text{ կամ } FC(E) > 0.1;$$

- Միջին ռիսկ նշանակալիություն՝

$$2 < RAW(E) < 100 \text{ և } FC(E) < 0.005 \text{ կամ } RAW(E) < 2 \text{ և } FC(E) > 0.005;$$

- Ցածր ռիսկ-նշանակալիություն՝ $RAW(E) < 2$ և $FC(E) < 0.005$:

FC (Fractional Contribution) - որքանով է դիտարկվող բաղադրիչը կամ միջոցը նպաստում համակարգի ձախողմանը: Ներկայացվում է հետևյալ բանաձևով՝

$$FC(E) = \frac{\sum_i \text{cutset}_i(E)}{P_{top}},$$

որտեղ $\sum_i \text{cutset}_i(E)$ -ը E-րդ պատահարի առաջացման համար բավարար խափանումների փոքրագույն համադրությունների հավանականությունների գումարն է, որը որոշվում է Բուլյան հանրահաշվի կիրառմամբ՝ համակարգչային կոդերի միջոցով, P_{top} -ը՝ դիտարկվող երևույթի ընդհանուր հավանականությունը:

RAW (Risk Achievement Worth) - ցույց է տալիս, թե քանի անգամ է աճում դիտարկվող երևույթի ընդհանուր հավանականությունը՝ դիտարկվող բաղադրիչի անաշխատունակության պատճառով: Ներկայացվում է հետևյալ բանաձևով՝

$$RAW(E) = \frac{P_{top}(1)}{P_{top}},$$

որտեղ E -ն դիտարկվող հիմնական իրադարձությունն է, $P(E)$ -ն՝ E իրադարձության տեղի ունենալու հավանականությունը, P_{top} -ը՝ դիտարկվող երևույթի ընդհանուր հավանականությունը, $P_{top}(x)$ - ը՝ դիտարկվող երևույթի ընդհանուր հավանականությունը, երբ $P(E) = x$ [13]:

Որպես օրինակ աղյուսակում բերված է ՀԱԷԿ-ի համակարգերի տարրերի ռիսկ-նշանակալիության ցուցակներից մեկ հատված [14]:

Եթե տարրի անվտանգության դասը 1 կամ 2 է, ապա խախտման կարևորությունը բարձրացվում է՝ ռիսկ-նշանակալիության ցուցանիշներից անկախ:

Աղյուսակ

ՀԱԷԿ-ի վթարային լրասնման համակարգի որոշ տարրերի ռիսկ-նշանակալիության FC և RIF ցուցանիշները

Հ/հ	Տարրը	FC	RIF
Ռիսկ-նշանակալիությունը՝ բարձր			
EM-PC-2APN-1	ՎԼՀ պոմպ 2ԱՊԻ-1	3.36E-02	5.90E+02
EM-PC-2APN-2	ՎԼՀ պոմպ 2ԱՊԻ-2	3.36E-02	5.90E+02
EM-PC-2APN-3	ՎԼՀ պոմպ 2ԱՊԻ-3	3.36E-02	5.90E+02
Ռիսկ-նշանակալիությունը՝ միջին			
EM-VI-2R-9-2	Ամրան 2P-9/2	1.23E-05	5.31E+00
EM-VI-2R-9-4	Ամրան 2P-9/4	1.23E-05	5.31E+00
EM-VI-2R-9-6	Ամրան 2P-9/6	1.23E-05	5.31E+00

Փուլ 3բ՝ փորձագետի գնահատում. Բազմակի, փոխկապակցված խախտումների ռիսկ-նշանակալիությունը չի կարող որոշվել համակարգերի տարրերի ռիսկ-նշանակալիության ցանկերի կիրառմամբ: Անվտանգության առումով բազմակի

խախտումների արդյունաբար ազդեցության գնահատման համար փորձագետը գնահատում է դրանց ռիսկ-նշանակալիությունը՝ ԱՀՎ մոդելում համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո վերահաշվարկներ կատարելով:

Փուլ 3գ՝ փորձագիտական վերլուծություն. Որոշ խախտումների ռիսկ-նշանակալիությունը չի կարող գնահատվել ո՛չ ցանկերի միջոցով, ո՛չ էլ ԱՀՎ մոդելների կիրառմամբ, քանի որ դրանք արտացոլված չեն մոդելներում: Հետևաբար՝ այս խախտումները պահանջում են փորձագիտական վերլուծության իրականացում: Փորձագետները խախտումների կարևորությունը որոշում են՝ ելնելով բազմաթիվ գործոններից:

Գնահատումները պետք է կատարվեն սահմանված ժամկետներում: Գնահատումների կատարման ժամկետները կարող են երկարաձգվել առանձին դեպքերում՝ կարգավորող մարմնի թույլտվությամբ:

Փուլ 4՝ կարգադրագրերի կազմում. Կարգադրագրերը պաշտոնական փաստաթղթեր են, որոնք պարտավորեցնում են լիցենզակիրին՝ վերացնելու խախտումը սահմանված ժամկետում:

Փուլ 5՝ կարգադրագրերի ներկայացում ԱԷԿ. Կարգադրագրերը կազմելուց հետո դրանք ներկայացվում են ԱԷԿ:

Փուլ 6՝ ԱԷԿ-ի կողմից կարգադրագրերի բողոքարկման գործընթաց. Կարգավորող մարմնի կողմից կարգադրագրերը ստանալուց հետո լիցենզակիրն իրավունք ունի հինգ աշխատանքային օրվա ընթացքում բողոքարկել տրված գնահատականը և սահմանված ժամկետը՝ ներկայացնելով հիմնավոր պատճառներ: Եթե լիցենզակրի ներկայացրած հիմնավորումները տեղին են և արժեքավոր, ապա տեսուչը կամ փորձագետը պարտավոր են վերանայել խախտման տարբերակումը դիտարկումից և խախտման կարևորությանը տրված գնահատականը: Արդյունքում որոշվում է վերջնական ռիսկ-նշանակալիությունը, և կազմվում են կարգադրագրեր, որոնք արդեն ենթակա չեն բողոքարկման: Լիցենզակիրը կամ կարգավորող մարմինը անհրաժեշտության դեպքում կարող են աշխատանքային հանդիպում նախաձեռնել:

Փուլ 7՝ կարգադրագրերի պահանջների կատարման հավաստիացում և արդյունքների փաստաթղթավորում. Սահմանված ժամկետի ավարտին կարգավորող մարմինը պետք է հավաստիանա, որ լիցենզակիրը կատարել է կարգադրագրերում նշված պահանջները, և փաստաթղթավորի արդյունքները:

Բոլոր փուլերի արդյունքները պետք է պարտադիր կերպով փաստաթղթավորվեն: Նպատակահարմար է, որ տեսուչներն օգտվեն մշակված մոտեցումից, քանի որ այն գնահատման պարզ գործիք է և պահանջում է միայն կատարել հստակ սահմանված քայլերը: Գործընթացը գերծ է սուբյեկտիվ գնահատումներից և ամբողջովին համահունչ է միջազգային պահանջներին:

Եզրակացություն. Մշակված է ՀԱԷԿ-ում ռիսկ-տեղեկացված ստուգումների իրականացման գործընթաց: Մշակված գործընթացը հիմնվել է առկա գործընթացի վրա՝ ստուգումների ծրագրման և հայտնաբերված խախտումների գնահատման փուլերում ռիսկ-տեղեկացված մոտեցումների ներդրմամբ: Մշակված գործընթացի կիրառման արդյունքում արդյունավետ կդառնա ստուգումների գործընթացում Կարգավորող մարմնի ռեսուրսների օգտագործումը: ԱԷԿ-ում իրականացվող ստուգումների արդյունքում արձանագրված խախտումների կարևորության գնահատման մշակված գործընթացի կիրառումը հնարավորություն է տալիս համակարգված կերպով իրականացնել դիտարկումների տարբերակումը գնահատման ենթակա խախտումներից, արձանագրված խախտումները դասակարգել ըստ կարևորության և առավել հիմնավոր կերպով սահմանել կարգադրագրերում նշվող պահանջների կատարման ժամկետները: Խախտումների գնահատման մշակված գործընթացը համապատասխանում է խախտումների գնահատման համակարգի առկայության ԱԷՄԳ պահանջին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. IAEA-TECDOC-1090 Quality assurance within regulatory bodies.- Vienna, 1999.
2. **Կանեցյան Գ.** ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի կողմից ՀԱԷԿ-ում իրականացվող ստուգումների պլանավորման և անցկացման մեթոդաբանության առաջարկ/ ՄՌԱԳԿ.-2019.-101 էջ:
3. **Կանեցյան Գ.** Ռիսկ-տեղեկացված տեսչական ստուգումների պլանավորման վերաբերյալ մեթոդաբանական փաստաթղթի առաջին տարբերակի մշակում/ ՄՌԱԳԿ.- 2017.- 43էջ:
4. **Gordon J., Turner S.**, Office for nuclear regulation – risk informed regulatory decision making.
5. <https://www.irpa.net/members/P11.47fp.pdf> 18.03.2021.
6. **International** workshop on risk informed inspection, inspection of performance of licensee organisation, and inspection aspects of plant near or at end-of-life. Appendix – Compilation of survey responses, 92p., © OECD 2005.
7. **Performance** of regulatory inspections in radiation protection at the Koeberg Nuclear Power Station (KNPS) Vanessa Majola National Nuclear Regulator (NNR).- Duynfontein, 7441, South Africa.
8. Application of Risk-Informed Approaches in Inspection Activity **G. Gromov, A. Dybach, A. Sevbo, et al** // Nuclear and radiation safety.-2010.-№3.-P.9-15. http://digitalrepository.unm.edu/ne_etds/22
9. https://www-pub.iaea.org/MTCD/Publications/PDF/P1804_web.pdf 18.03.2021.
10. **IAEA-TECDOC-1867** Handbook for Regulatory Inspectors of Nuclear Power Plants.
11. <https://www.nrc.gov/docs/ML1924/ML19247C384.pdf>
12. **Working** group on the regulatory use of PRA Methodology: Final Report of the 4th Mandate.-Budapest, 2018.

13. **Կանեցյան Գ. Ռ.** Ռիսկ-տեղեկացված տեսչական ստուգումների պլանավորման վերաբերյալ առաջարկ: NRSC-A117-3.2.Տարբերակ 01:
14. **Kanetsyan G.** Development of the first version of the methodological document on Risk-informed inspection planning Version 01: NRSC.-2018.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ: Նյութը ներկայացվել է խմբագրություն 18.03.2021:

Ա.Գ. ХАЧАТРЯН, Г.Р. КАНЕЦЯН, А.А. ГЕВОРГЯН

РАЗРАБОТКА ПРОЦЕССА ПРОВЕДЕНИЯ РИСК-ИНФОРМИРОВАННЫХ ИНСПЕКЦИЙ НА ААЭС

Регулирующий орган ядерной сферы удостоверяется в безопасной эксплуатации ядерных установок посредством проведения инспекций. Разработан процесс проведения риск-информированных инспекций с целью эффективного использования инспекционных ресурсов Республики Армения и, как следствие, повышения уровня безопасности. Процесс составлен посредством внедрения риск-информированных подходов на разных этапах действующего процесса. Благодаря правильному определению инспекционных целей и классификации нарушений по важности, использование инспекционных ресурсов Регулирующего органа станет эффективным.

Ключевые слова: риск-информированные инспекции, вероятностный анализ безопасности (ВАБ), Атомная электрическая станция (АЭС), Армянская атомная электростанция (ААЭС).

A.G. KHACHATRYAN, G.R. KANETSYAN, A.A. GEVORGYAN

DEVELOPING THE PROCESS OF PERFORMING RISK-INFORMED INSPECTIONS AT THE ANPP

The Regulatory body of the nuclear field is ensured by the safe operation of nuclear installations by means of performing inspections. A procedure to perform risk-informed inspections is developed aimed at making the use of inspection resources of RA efficient, and consequently, improving the safety level. The procedure is developed via introduction of risk-informed approaches in different phases of the current procedure. Due to the right targeting of inspections and the classification of inspection findings according to their significance, the use of inspection resources of the Regulatory body will become efficient.

Keywords: risk-informed inspections, probabilistic safety assessment (PSA), nuclear power plant (NPP), Armenian Nuclear Power plant (ANPP).

Լ.Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԻՐՏՈՒԱԼ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ VOIP ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ

Մշակված է մոդել, որը նկարագրում է ամպային սերվերների հաշվողական ռեսուրսների դինամիկ բաշխումը այդ սերվերների վրա գործող վիրտուալ մեքենաների միջև: Պատկերված է այդ մոդելի կիրառման նպատակահարմարությունը VoIP համակարգերում, նկարագրված են VMware համապատասխան ռեսուրսների դինամիկ բաշխման ծրագրային միջոցները միջավայրում և կիրառման արդյունքները:

Առանցքային բառեր. համացանց, ամպային ծառայություններ, VoIP, հաշվողական ռեսուրսների դինամիկ բաշխում, վիրտուալ մեքենաներ, ձայնային կոդեկներ:

Համացանցի բուռն զարգացումը հիմք ծառայեց նրա ակտիվ ներթափանցմանը, համագործակցմանը, իսկ հետագայում՝ նաև գերիշխմանը ավանդական տեխնոլոգիաների ոլորտում: Այդ ոլորտներից էր նաև հեռախոսային կապը, որի համար ստեղծվեց VoIP (Voice over IP- ձայնի փոխանցում համացանցով) տեխնոլոգիան, որն էապես էժանացնում է հեռախոսային խոսակցության արժեքը, ապահովում է ձայնի փոխանցման բարձր որակ, հուսալիություն և գաղտնիություն:

VoIP-ն սկսվեց համապատասխան սարքավորումների՝ IP PBX (IP հեռախոսակայանների), դրանց ծրագրային ապահովման նախագծումից [1] և հետագա զարգացումից [2, 3]: Վերջին տարիներին այդ VoIP սարքավորումների համար մշակված ծրագրային ապահովումը հարմարեցվում և շահագործվում է ամպային սերվերներում [4]՝ հիմնականում օգտագործելով մեկ սերվերի վրա գործող մի քանի վիրտուալ մեքենաներ: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս կազմակերպություններին՝ սարքավորումների գնման և սպասարկման ծախսերը փոխարինելու ամսավճարով, որը ներկայումս լայնորեն կիրառվում է միջին և փոքր, հատկապես նորաստեղծ կազմակերպությունների կողմից:

Ամպային սերվերներում VoIP ծրագրային ապահովման շահագործումը առաջ է բերում այդ սերվերների ռեսուրսների օպտիմալ կառավարման խնդիրը այս համակարգերի համար, որի լուծման համապատասխան մոդելը և ծրագրային միջոցները նկարագրված են սույն աշխատանքում:

Ներկայացնենք նախ հետևյալ սահմանումները:

$VM = \{VM_1, VM_2, \dots, VM_N\}$ -ը վիրտուալ մեքենաների բազմություն է, որոնք աշխատում են S սերվերի վրա և օգտագործում են ռեսուրսներ S սերվերին

հասանելի $R = \{R^1, R^2, \dots, R^L\}$ բազմությունից, իսկ $v_k(R^k)$ ֆունկցիան վերադարձնում է R^k բազմության կամայական ռեսուրսի օգտագործման թվային չափանիշը:

S սերվերի և $VM_1, VM_2, \dots, VM_N$ վիրտուալ մեքենաների աշխատանքի ժամանակը ներկայացնենք որոշակի T կրկնվող ժամանակաշրջանի $T_1, T_2, \dots, T_M$ ժամանակահատվածներով՝ մեկ շաբաթվա ժամերի նմանությամբ:

Ամեն VM_i վիրտուալ մեքենային և T_j ժամանակահատվածին համապատասխանեցնենք $\{A_{ij}^k\}, \{P_{ij}\}, \{UR_{ij}^k\}, \{C_{ij}\}$ բազմությունները ($i=1,2,\dots,N$), ($j=1,2,\dots,M$), ($k=1,2,\dots,L$), որտեղ $A_{ij}^k = v_k(R_{ij}^k)$ -ն V_i -ը վիրտուալ մեքենային տրամադրված R^k ռեսուրսի չափանիշն է T_j ժամանակահատվածում, P_{ij} -ն՝ V_i -ը վիրտուալ մեքենայի վրա կատարվող խնդիրների բազմությունը T_j ժամանակահատվածում, $UR_{ij}^k = f_k(P_{ij}, R^k)$ -ը, V_i -ը՝ վիրտուալ մեքենայի՝ T_i ժամանակահատվածում R^k օգտագործվող ռեսուրսի չափանիշը P_{ij} կատարվող խնդիրների բազմության դեպքում, որտեղ f_k -ն այն ֆունկցիան է, որը հաշվարկում է R^k օգտագործվող ռեսուրսի չափանիշը P_{ij} խնդիրների բազմության դեպքում, C_{ij} -ն V_i -ը՝ վիրտուալ մեքենայի ռեսուրսների դեկլարման պարամետրերի բազմությունը T_i ժամանակահատվածում:

Անխափան աշխատանքի համար ցանկացած T_i ժամանակահատվածում պետք է տեղի ունենան հետևյալ պայմանները.

1. $A_{ij}^k \geq UR_{ij}^k$, կամայական T_i ժամանակահատվածի և R^k ռեսուրսի, այսինքն՝ բոլոր վիրտուալ մեքենաներին տրամադրված R_{ij}^k ռեսուրսների դեպքում A_{ij}^k չափանիշները պետք է բավարար լինեն՝ կատարվող խնդիրներն իրականացնելու համար.

2. $\sum_{i=1}^N A_{ij}^k \leq v_k(R^k)$ կամայական T_i ժամանակահատվածի և R^k ռեսուրսների, այսինքն՝ բոլոր վիրտուալ մեքենաներին տրամադրված R_{ij}^k ռեսուրսների դեպքում չափանիշների գումարը չի կարող գերազանցել R^k ռեսուրսի առավելագույն չափանիշը:

Մյուս կողմից՝ ռեսուրսների օպտիմալ օգտագործման համար անհրաժեշտ է նվազեցնել տրամադրված և իրականում օգտագործվող ռեսուրսների չափանիշների տարբերության՝ $v_k(R^k) - \sum_{i=1}^N A_{ij}^k$ արժեքը, պահպանելով վերոնշյալ պայմանները:

Այս պայմանները պահպանելու համար անհրաժեշտ է օպտիմալ կերպով սահմանել C_{ij} ռեսուրսների դեկլարման պարամետրերի բազմությունները կամայական VM_i վիրտուալ մեքենաների և T_j ժամանակահատվածի համար:

Եթե նույն սերվերում գործող V_i մեքենաների վրա կատարվող P_{ij} խնդիրների բազմությունը տարբերվում է տարբեր T_j ժամանակահատվածներում, ապա պահպանելով (1) և (2) պայմանները և ելնելով խնդիրների բաշխման վերլուծության արդյունքներից՝ նպատակահարմար է C_{ij} դեկլարման պարամետրերի միջոցով

նվազեցնել կամ ավելացնել V_i վիրտուալ մեքենային հատկացված R^k ռեսուրսները T_j -ի ժամանակահատվածում, դրանով իսկ դինամիկ կերպով վերաբաշխելով բոլոր R^k ռեսուրսները:

Այսպիսով, ռեսուրսների դինամիկ բաշխման ընդհանուր համակարգը պետք է բաղկացած լինի երկու առանձին համակարգերից՝

- կամայական VM_i վիրտուալ մեքենաների և T_i ժամանակահատվածների P_{ij} կատարվող խնդիրների մասին տվյալների կուտակման և վերլուծության համակարգ, որը նաև հաշվարկում է UR_{ij}^k արժեքները և սահմանում C_{ij} ռեսուրսների ղեկավարման պարամետրերի արժեքները,

- S սերվերի ռեսուրսների դինամիկ բաշխման համակարգ, որը որպես մուտքային տվյալներ օգտագործում է C_{ij} ռեսուրսների ղեկավարման պարամետրերի արժեքները:

Բնական է, որ S սերվերի ռեսուրսների դինամիկ բաշխումը որոշակի ժամանակաշրջանի ընթացքում նպատակահարմար է կատարել միայն այն դեպքում, երբ տարբեր վիրտուալ մեքենաների վրա կատարվող խնդիրների քանակը կանոնավոր կերպով էապես փոփոխվում է առանձին ժամանակահատվածներում: Հենց այս պայմանին են բավարարում VoIP-ի համակարգերը. դրանց հիմնական խնդիրները հեռախոսազանգերն են, որոնք մեծ մասամբ կատարվում են աշխատանքային ժամերին, իսկ աշխատանքային ժամերը տարբերվում են ըստ երկրների (աղ. 1):

Աղյուսակ 1

Աշխատանքային ժամերի բաշխումը՝ ըստ 0-կան ժամային գոտու

Նոր Զելանդիա																		Ն. Զել.											
						Հայաստան																							
																		ԱՄՆ											
Ժամ	0	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23					

Այս հանգամանքից ելնելով, համաձայն նկարագրված մոդելի, մշակվել են համապատասխան միջոցներ, որոնք իրականացնում են սերվերների ռեսուրսների դինամիկ բաշխումը VoIP-ի համակարգեր սպասարկող վիրտուալ մեքենաների միջև: Տվյալների կուտակումը և վերլուծությունը կատարվում է EpygiArm ընկերության ecMON գործիքի միջոցով, որը կատարում է նաև սպասարկման այլ խնդիրներ՝ վճարումների ստուգում, հասանելիություն, ծրագրային ապահովման թարմացում և այլն: Բաշխման ենթահամակարգն իրականացվել է VMWARE համակարգում տեղադրված վիրտուալ մեքենաների միջև, որոնց վրա գործում են տարբեր երկրների կազմակերպությունները սպասարկող VoIP համակարգեր: Որպես S

սերվերի բաշխվող R^1 և R^2 ռեսուրսներ հանդիսացել է պրոցեսորի և ցանցային թողունակություն օգտագործումը, իսկ խնդիրներ՝ հեռախոսագանգերի կատարումը: Այս հեռախոսագանգերի համար R^1 և R^2 օգտագործվող ռեսուրսների արժեքները կախված են կիրառվող ձայնային կոդեկներից, իսկ f_1 և f_2 ֆունկցիաները հաշվարկում են օգտագործվող ռեսուրսների չափանիշները ներկայացված արժեքների հիման վրա (աղ. 2):

Աղյուսակ 2

Ռեսուրսների օգտագործման արժեքները՝ ըստ ձայնային կոդեկների [5-8]

	G.711u/G.711a	G.726-40	G.729a	iLBC-13.33
Պրոցեսոր (MHz)	1.2	4.1	8.5	18.4
Ցանցային թողունակություն (kb/s)	84	53	29	27

Ստորև ներկայացված են դինամիկ բաշխման իրականացման հիմնական քայլերը.

- Նոր VoIP համակարգը վիրտուալ մեքենայի վրա տեղադրելիս հատկացվում են ռեսուրսներ, որոնք ապահովում են համակարգի անխափան աշխատանքը՝ ըստ պատվիրած հեռախոսագանգերի առավելագույն քանակի: Դրանք ընդգրկում են նաև այն ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են բուն համակարգին և մնում են անփոփոխ ամբողջ ժամանակ:

- Ամեն մի վիրտուալ մեքենայից, որի վրա գործում է համապատասխան VoIP-ի համակարգը, ստացվում են կատարվող զանգերի մասին տեղեկություններ, որոնցից են կոնկրետ ժամերին կատարված զանգերի քանակը և VoIP կոդեկի տեսակը մեկ շաբաթվա բոլոր ժամերին:

- Ամեն մի վիրտուալ մեքենայի համար հաշվարկվում է պահանջվող ռեսուրսների քանակը, և սահմանվում են ռեսուրսների ղեկավարման պարամետրերի արժեքները:

- VMWARE PowerCLI-ի միջոցով իրականացվում է դինամիկ բաշխումը:

Նման մոտեցումը հնարավորություն է տալիս նույն սերվերին ավելացնել տեղադրված VoIP համակարգերի քանակը, ինչը էապես նվազեցնում է շահագործման ծախսերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Wallingford T.** Switching to VoIP, O'Reilly Media, Inc., 2003. - 477 p.
2. **Harutyunyan L. Gardishyan H.** Real time resource management in VoIP voice data processing systems //Proc. of the IASTED International Conference on Automation, Control and Information Technology with cooperation of Russian Academy of Science.- Novosibirsk, 2005. -P.62-65.

3. **Гардишян Г., Арутюнян Л.** Об одном подходе к организации систем обработки звуковых данных в IP сетях //Известия НАН РА и ГИУА. Сер. ТН.- 2005.- Т. LVIII, №1. -С.115 -119.
4. **Marinescu D.** Cloud Computing: Theory and Practice.- Newnes, 2013. - 416 p.
5. G.711 : Pulse code modulation (PCM) of voice frequencies, <https://www.itu.int/rec/T-REC-G.711-198811-I/en>
6. G.726 : 40, 32, 24, 16 kbit/s Adaptive Differential Pulse Code Modulation (ADPCM) <https://www.itu.int/rec/T-REC-G.726-199012-I/en>
7. G.729 : Coding of speech at 8 kbit/s using conjugate-structure algebraic-code-excited linear prediction (CS-ACELP), <https://www.itu.int/rec/T-REC-G.729-201206-I/en>
8. Internet Low Bitrate Codec, <https://www.ietf.org/rfc/rfc3951.txt>

«ՀՓԻՋԻ Արմ» ՍՊԸ: Նյութը ներկայացվել է խմբագրություն 18.03.2021:

Լ.Լ. ԱՐՄԵՆՅԱՆ

РЕШЕНИЕ ЗАДАЧИ ОПТИМАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ РЕСУРСАМИ ВИРТУАЛЬНЫХ МАШИН ДЛЯ VOIP СИСТЕМ

Разработана модель динамического распределения ресурсов облачных серверов между функционирующими на них виртуальными машинами. Показана целесообразность применения этой модели для систем VoIP. Представлены программные средства динамического распределения ресурсов между виртуальными машинами в среде VMware и результаты их практического применения.

Ключевые слов: Интернет, облачные технологии, VoIP, динамическое распределение вычислительных ресурсов, виртуальные машины, голосовые кодеки.

L.L. HARUTYUNYAN

SOLVING THE PROBLEM OF OPTIMAL MANAGEMENT OF VIRTUAL MACHINE RESOURCES FOR VOIP SYSTEMS

A model for the dynamic distribution of cloud server resources between virtual machines operating on them has been developed. The expediency of using this model for VoIP systems is shown. Software tools for the dynamic allocation of resources between virtual machines in the VMware environment, and the results of their practical application are presented.

Keywords: Internet, cloud technologies, VoIP, dynamic computing resource allocation, virtual machines, voice codecs.

Ա.Գ. ԱՅՎԱԶՅԱՆ, Ս.Խ. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

ԲԶԶԱՑԻՆ ԿԱՊԻ ՑԱՆՑԵՐԻ ԲԱԶԱՑԻՆ ԿԱՑԱՆՆԵՐԻ ԷՆԵՐԳԱԾԱԽՄԻ
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Առաջարկվել է բջջային կապի ցանցերի բազային կայանների էներգածախսի գնահատման մաթեմատիկական մոդել, որը հաշվի է առնում կայանների համալրող տեխնիկական միջոցների աշխատանքային և դրվածքային հզորությունները, ինչպես նաև հնարավոր էներգետիկական կորուստները: Գնահատվել և վերլուծվել են տարբեր հզորությամբ կայանների էներգածախսը և դրա բաշխվածությունը՝ ըստ տեխնիկական միջոցների: Նշվել են բազային կայանների էներգաարդյունավետության բարձրացման հնարավոր եղանակները և էներգախնայողության ուղիները:

Առանցքային բառեր. բջջային կապ, բազային կայան, էներգածախս, էներգաարդյունավետություն:

Ներածություն: Ժամանակակից անլար կապի տեխնոլոգիաների զարգացումն ուղղված է կապի հուսալիության, թողունակության և արագագործության բարձրացմանը: Այդ նպատակով ներկայումս լայնորեն մշակվում և կիրառվում են բջջային ցանցերի բազային կայանների (Basic Station - BS) լավարկման նոր տեխնոլոգիական և ալգորիթմական լուծումներ, ավելի զարգացած և ընդլայնված հնարավորություններով համակարգեր:


Դրանց թվին են պատկանում բջջային կապի, այսպես կոչված, «հետերոգեն ցանցերը» (Heterogeneous Network - HetNet) [1], որոնք ներառում են ինչպես սովորական մակրո BS-ներ (macroBS), այնպես էլ ավելի փոքր հզորությամբ և սպասարկման ծածկույթով միկրո BS-ներ (microBS): Զուգակցված կիրառվում են նաև առավել փոքր BS-ներ՝ պիկո և ֆեմտո (picoBS, femtoBS): Այսպիսի բազմաշերտ կառուցվածքում մակրո շերտը ծածկույթ է ապահովում մեծ արագությամբ շարժվող և այն տարածքի բաժանորդներին, որտեղ միկրո, պիկո և ֆեմտո շերտերի ծածկույթը բացակայում է, իսկ վերջիններս ապահովում են մեծ արագությամբ և մեծ թողունակությամբ կապ այն հատվածներում, որտեղ կա բաժանորդային սարքավորումների մեծ խտություն [2]:

Գրականության մեջ մեծ տեղ է հատկացված HetNet-ի BS-ների այն խնդիրների քննարկմանը, որոնք միտված են մատուցվող ծառայությունների որակի (Quality of Service - QoS) բարձրացմանը՝ մեծ ծավալով տվյալների հաղորդման, առավելագույն սպեկտրալ արդյունավետության և փոքր հապաղման ժամանակների ապահովմանը [1]:

Անհամեմատ քիչ ուշադրություն է դարձվում բջջային կապի ցանցերի BS-ների էներգաարդյունավետությանը, որին, կայանների շարունակաբար խտացման պայմաններում, ներկայումս առաջադրվում են բավականին խիստ պահանջներ: Ավելին, մի շարք նորարարական տեխնոլոգիական և ալգորիթմական լուծումներ մեծացնում են BS-ների էներգածախսը և հանգեցնում էներգաարդյունավետության փոքրացմանը: Այսպես, ժամանակակից բջջային կապի ցանցերում ներդրված օրթոգոնալ հաճախային բաժանմամբ մուլտիպլեքսավորման (Orthogonal Frequency Division Multiplexing - OFDM) բազմակրող հաղորդման տեխնոլոգիան մի կողմից՝ նվազեցնում է ընդունիչում կատարվող գործողությունների հաշվողական բարդությունը և փոքրացնում հապաղումները, մյուս կողմից՝ մեծացնում է հաղորդվող ազդանշանի առավելագույն և միջին հզորությունների հարաբերության գործակիցը (Peak to Average Power Ratio - PAPR) [3]: Որքան մեծ է PAPR-ը, այնքան փոքր է BS-ների ուժեղարարների էներգաարդյունավետությունը [4]:

Բջջային կապի ցանցերի BS-ների էներգածախսի գնահատումը և վերլուծությունը թույլ կտան հստակեցնել դրանց էներգաարդյունավետության բարձրացման եղանակները և էներգախնայողության ուղիները: Այդ առումով կարևոր է նշել, որ ներկայումս BS-ների վրա ծախսվում է անլար հեռահաղորդակցական համակարգերի էեկտրասնուցման ամբողջ ծավալի մոտավորապես 57%-ը [5]:

Բազային կայանների էներգածախսի մոդելը: Նկ. 1-ում բերված է բջջային կապի ցանցի BS-ի էներգասնուցման կառուցվածքային ընդհանուր սխեման:



Նկ. 1. Բազային կայանի էներգասնուցման կառուցվածքային ընդհանուր սխեման

Կայանի համալրող տեխնիկական միջոցներն են՝ փոփոխական հոսանքի սպառիչները (Power Supply - PS), լարման փոխակերպիչը (AC-DC converter), լարման կարգավորիչը (DC-DC controller), թվային ազդանշանի մշակման սարքավորումը (BaseBand Unit - BB), ռադիոհաճախային հաղորդիչ-ընդունիչ համակարգերը (Radio Frequency System - RF), ուժեղարարները (Power Amplifier - PA) և ֆիդերները (Feeder - F):

Կախված BS-ի հզորությունից, նշանակությունից և շահագործման առանձնահատկություններից՝ թվարկված տեխնիկական միջոցների մի մասը կարող է նաև չօգտագործվել կամ շահագործվել ոչ լիարժեք. հնարավոր է նաև լրացուցիչ այլ հանգույցների կիրառումը: Մասնավորապես, BS-ներում հեռահար ռադիոհանգույցների (Remote Radio Unit - RRU) առկայության դեպքում հաղորդիչ-ընդունիչ համակարգը տեղակայվում է անմիջապես ալեհավաքի հարևանությամբ, և ֆիդերներ չեն կիրառվում [6], իսկ հատկապես խոշոր և քաղաքներից դուրս գտնվող BS-ները լրացուցիչ համալրված են հեռակառավարվող և ինքնավար սնուցումն ապահովող համակարգերով [7]:

Նշենք նաև, որ BS-ների համալրող տեխնիկական միջոցների մի մասը ստատիկ էներգասպառիչ է, իսկ մյուսները՝ դինամիկ են, և դրանց էներգածախսը կախված է թրաֆիկից և կայանի հաղորդման ելքային հզորությունից:

